

Օ. Համառոտ մեկնաբանություն ԳԳ ազգային վիճակագրական ծառայության համակարգում սպառողական գների դիտարկման և ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետությունում սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար պառոտական զամբյուղի կշիռների և բազիսային տարվա փոփոխության մասին

Համաձայն սպառողական գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում 2004թ. (2004թ. ապրիլի 1-ից 2005թ. մարտի 31-ը) տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված (ընտրանքային) հետազոտության արդյունքները, ինչպես նաև 2005թ. օրացուցային տարվա գնային փոփոխությունները, կատարվել է սպառողական զամբյուղում ընդգրկված ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչների տեսակարար կշիռների վերահաշվարկ (քանզի հիշատակված հետազոտության արդյունքներով արձանագրվել էր սպառողական զամբյուղի բաղադրատարրերի էական փոփոխություն): 2006 թվականի սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար բազիսային տարի է ընդունվել 2005 թվականը (2002 թվականի փոխարեն):

2006 թվականից սպառողական զամբյուղում լրացուցիչ ներառվել է 70 ապրանք-ծառայություն (91 ապրանք-ծառայություն-ներկայացուցիչ): 2006թ. հունվարից ՍԳԻ-ի հաշվարկման համար դիտարկվող ապրանք-ծառայությունների քանակը 400-ի փոխարեն կազմել է՝ 470 (560 ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչ):

Միաժամանակ, միջին հանրապետական ցուցանիշներում ներառվել է նաև ԳԳ Արարատի մարզը (Արտաշատ քաղաքը):

Սպառողական գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության փոփոխություններով պայմանավորված 2006թ. հունվար-մարտ ամիսների ինդեքսները վերահաշվարկվել են:

Հայաստանի Հանրապետությունում սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար երևան քաղաքում և հանրապետության 10 մարզերում սահմանված մեթոդաբանությամբ կատարվում է սպառողական գների (սակագների) ամենամսյա դիտարկում:

Ըստ մարզերի, գների դիտարկումը կատարվում է հետևյալ քաղաքներում.

<i>Մարզի անվանումը</i>	<i>դիտարկվող քաղաքները</i>
Արագածոտն	Թալին
Արմավիր	Վաղարշապատ
Գեղարքունիք	Մարտունի
Լոռի	Վանաձոր
Կոտայք	Հրազդան, Չարենցավան
Շիրակ	Գյումրի
Սյունիք	Կապան
Վայոց ձոր	Եղեգնաձոր
Տավուշ	Դիլիջան
Արարատ	Արտաշատ

Սահմանված է գների դիտարկման և ինդեքսների հաշվարկման հետևյալ կարգը.

- հետազոտվող քաղաքներում յուրաքանչյուր ապրանքատեսակի համար գների դիտարկումը կատարվում է նախապես ընտրված 9-12 բազային առևտրական կազմակերպություններում՝ անկախ սեփականության ձևից
- գները դիտարկվում են յուրաքանչյուր ամսվա համար 3 անգամ՝ նախորդ ամսվա 30-ին, տվյալ ամսվա 10-ին և 20-ին
- գրանցված գների հիման վրա կատարվում է միջին ամսական գների հաշվարկ՝ ըստ դիտարկվող քաղաքների և ապրանքատեսակների
- գների դիտարկման համար ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների ընտրանքը կատարվել է, հաշվի առնելով սպառողական շուկայում դրանց հագեցվածության ու սպառման աստիճանը, արդիականությունը, ներկայացուցչական լինելը և այլն, նշելով դրանց տեխնիկական բնութագրերը, չափման միավորը և այլ անհրաժեշտ հատկանիշներ
- գնային տեղեկատվական բազայի հիման վրա կատարվում է սպառողական գների ամփոփ ինդեքսի հաշվարկ՝ ըստ մարզերի և հանրապետության, ըստ 9 խոշոր և 64 խոշորացված ապրանքախմբերի, ինչպես նաև 470 անվանում ապրանքների և ծառայությունների տեսակների
- ՍԳԻ-ի հաշվարկը կատարվում է Լասպերեյսի բանաձևով: